

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ/ADMINISTRATIVE LAW/АДМИНИСТРАТИВНОЕ ПРАВО

<https://doi.org/10.59546/18290744-2025.10-12-31>

ԱՇՈՏ ՊՈԴՈՍՅԱՆ
*Փաստաբան, Ֆրիդրիխ Վիլհելմի անվան
Բոննի համալսարանի ասպիրանտ*

ASHOT POGHOSYAN
*Lawyer, PhD candidate at the University of Bonn
(Rheinische Friedrich-Wilhelms-Universität Bonn)*

АШОТ ПОГОСЯН
*Адвокат, аспирант Боннского университета
им. Фридриха Вильгельма*

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀՀ ԻՐԱՎԱԿԱՐԳՈՒՄ**

**FUNDAMENTAL ISSUES OF THE DIRECT APPLICATION OF THE
EURASIAN ECONOMIC UNION TECHNICAL REGULATIONS IN THE
LEGAL SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA.**

**ПРОБЛЕМЫ ПРЯМОГО ПРИМЕНЕНИЯ ТЕХНИЧЕСКИХ РЕГЛАМЕНТОВ
ЕВРАЗИЙСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА В ПРАВОВОЙ
СИСТЕМЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Ներածություն

2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագիրը, որը ՀՀ Ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 4-ի ԱԺՈ-132-Ն որոշմամբ¹ վավերացվել է:

«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմա-

¹ Ի տարբերություն 2015 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության, 2005 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը հստակ չի սահմանել, որ միջազգային պայմանագրերը պետք է վավերացվեն օրենքի ընդունմամբ, ինչի արդյունքում մինչև 2015 թ. գործող խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության կիրառության շրջանակներում միջազգային պայմանագրերի վավերացման նպատակով ընդունվում էին ոչ թե օրենքներ, այլ՝ ԱԺ որոշումներ:

նագիր) 10-րդ բաժինը կարգավորում է Եվրասիական տնտեսական միության (այսուհետ նաև՝ Միություն) տեխնիկական կանոնակարգումը:

Պայմանագրի 51-րդ հոդվածով սահմանվում են տեխնիկական կանոնակարգման ընդհանուր սկզբունքները, իսկ 52-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են այն ոլորտները և նպատակները, որոնց միասնական կանոնակարգման համար Միությունը կարող է ընդունել կանոնակարգեր: Մասնավորապես՝ Պայմանագրի 52-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերության համաձայն՝

«1. Մարդու կյանքի և (կամ) առողջության, գույքի, շրջակա միջավայրի, կենդանիների ու բույսերի կյանքի և (կամ) առողջության պաշտպանության, սպառողներին մոլորության մեջ գցող գործողությունների կանխարգելման, ինչպես նաև էներգետիկ արդյունավետության ու ռեսուրսախնայողության ապահովման նպատակներով Միության շրջանակներում ընդունվում են Միության տեխնիկական կանոնակարգերը»:

Վերոնշյալ նպատակներից դուրս տեխնիկական կանոնակարգերի ընդունումն արգելվում է (տես Պայմանագրի 52-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը): Միության տեխնիկական կանոնակարգերի մշակման, ընդունման, փոփոխման և չեղյալ հայտարարման կարգը հաստատվում է Հանձնաժողովի կողմից (տես Պայմանագրի 52-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերությունը):

Սույն հոդվածի շրջանակում առանձնակի ուշադրության է արժանանալու Պայմանագրի 52-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը², որի համաձայն՝

«2. Միության տեխնիկական կանոնակարգերը Միության տարածքում ունեն ուղղակի գործողություն»:

Վերոնշյալ դրույթը ՀՀ իրավակիրառ պրակտիկայում առաջացնում է բազում հարցեր և խնդիրներ, որոնք դեռևս չեն ստացել բավարար և համոզիչ լուծումներ: Առաջին խնդրահարույց հարցը այն է, թե արդյոք Միության տեխնիկական կանոնակարգերը պետք է դիտարկվեն ՀՀ օրենսդրության մաս: Եթե այո, ապա երկրորդ հիմնարար խնդիրը դառնում է այն, թե արդյոք և ինչպես կարող են ՀՀ քաղաքացիները պաշտպանվել Միության տեխնիկական կանոնակարգերով սահմանված նորմերից, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն սահմանափակում են ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրենց հիմնական իրավունքները և ազատությունները: Որպես այս հարցադրման բաղկացուցիչ մաս՝ պետք է գնահատվի, թե արդյոք ՀՀ դատարանները, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրական դատարանը կարող են ստուգել Միության տեխնիկական կանոնակարգերի իրավաչափությունը և/կամ սահմանադրականությունը: Ո՞րն է այն չափացույցը, որի հիման վրա պետք է ստուգվի տեխնիկական կանոնակարգի իրավաչափությունը/սահմանադրականությունը: Ինչպիսի՞ հարաբերակցության/աստիճանակարգության մեջ են գտնվում ՀՀ նորմատիվ ակտերը և Միության տեխնիկական կանոնակարգերը:

Ստորև փորձ է արվում վերլուծել վերը բարձրացված հարցերը և գտնել դրանց սահմանադրաիրավական պատասխանները³, այդ թվում նաև իրավահամեմատական անդրադարձ

² ԵԱՏՄ այլ մարմինների կողմից ընդունվող ակտերի և ՀՀ օրենսդրության նկատմամբ դրանց հարաբերակցության վերաբերյալ մանրամասն տես Ա. Ղամբարյան, Եվրասիական տնտեսական միության մարմինների և Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի կոլիզիաները, Բանբեր Արդարադատության ակադեմիայի, № 1 (5), 2021, էջ 17 ու հաջորդներ:

³ Այն, որ ԵԱՏՄ պայմանագրի և ՀՀ Սահմանադրության միջև կարող են առաջանալ բարդ խնդիրներ և, որ դրանք պետք է ստանան գիտագործնական լուծում, կանխատեսել է դեռևս Գ. Դանիելյանը, ԵԱՏՄ-ի մարմինների

կատարելով Եվրոպական Միության համապատասխան իրավունքին և դրա հարաբերությամբ ԵՄ անդամ պետությունների իրավակարգերի հետ:

2. Հիմնական հետազոտություն

ա. Միության տեխնիկական կանոնակարգերը որպես ՀՀ օրենսդրության մաս

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը «օրենսդրություն» եզրույթը սահմանում է որպես օրենսդրական և ենթաօրենսդրիչ օրենսդրություն իրավական ակտերի ամբողջություն: Նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը «օրենսդրական ակտ» եզրույթը սահմանում է որպես Հայաստանի Հանրապետության ժողովրդի կամ Ազգային ժողովի ընդունած նորմատիվ իրավական ակտ՝ Սահմանադրություն, սահմանադրական օրենքներ և օրենքներ:

Նշված դրույթների համակարգային մեկնաբանության արդյունքում կարելի է եզրակացնել, որ ՀՀ օրենսդրությունը բաղկացած է բացառապես ներպետական նորմատիվ իրավական ակտերից:

Նշվածի համատեքստում պետք է քննարկման առարկա դարձվի, թե ինչ հարթության վրա են գտնվում 1. միջազգային պայմանագրերը, ինչպես նաև, մասնավորապես, միջազգային պայմանագրի հիման վրա ստեղծված վերպետական մարմնի, այն է՝ 2. Միության՝ տեխնիկական կանոնակարգերը:

բ. Միջազգային պայմանագիրը ՀՀ իրավական աստիճանակարգում

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը կարգավորում է նորմերի աստիճանակարգությունը՝ հռչակելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ (1-ին մաս): Օրենքները և սահմանադրական օրենքները, որոնք թվով յոթն են, պետք է համապատասխանեն Սահմանադրությանը (1-ին և 2-րդ մասերի համակարգային մեկնաբանություն), իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ օրենքներին, սահմանադրական օրենքներին և Սահմանադրությանը: Նշվածից կարելի է եզրակացնել, որ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը կարգավորում են բացառապես ներպետական իրավական ակտերի աստիճանակարգությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը 3-րդ մասը, այդպիսով, սահմանում է կոլիզիոն կանոն օրենքների և վավերացրած միջազգային պայմանագրերի համար՝ սահմանելով, որ երկուսի միջև հակասություն առաջանալու դեպքում պետք է կիրառվեն միջազգային պայմանագրի նորմերը: Այսինքն՝ եթե ՀՀ օրենքով որևէ հարցին տրվել է մի լուծում, իսկ վավերացված միջազգային պայմանագրով նույն հարցին տրվել է մեկ այլ լուծում, ապա իրավակիրառը պարտավոր է մի կողմ թողնելով ՀՀ օրենքը՝ կիրառել վավերացված միջազգային պայմանագրի նորմը: Տարբերությունն այն է նորմերի կիրառման առաջնայնության և գործողության առաջնայնության միջև: Մինչ կիրառման առաջնայնությունը զուտ կոլիզիոն կանոն է⁴, գործողության առաջնայնությունը նորմերի ավելի բարձր կամ ցածր ուժ

որոշումների իրավական արժեքը ներպետական իրավական համակարգում // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԵՊՀ հրատ., 2016, էջ 68 ու հաջորդներ, մասնավորապես՝ էջ 70:

⁴ Ինչպես օրինակ՝ ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի կիրառման առաջնայնության կանոնը, տես «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը:

ունենալու պատճառով մեկը մյուսին վերացնելու հիմք է⁵:

Ասվածը պատկերավոր կերպով ներկայացնելու համար բերենք մեկ օրինակ. դիցուք, Վարչական դատարանում վիճարկման հայցի շրջանակում գործը քննելիս դատարանը եզրահանգում է, որ կիրառման ենթակա Կառավարության նորմատիվ բնույթի որոշումը հակասում է օրենքին: Այս դեպքում, որպեսզի Վարչական դատարանը կարողանա «անտեսել» Կառավարության որոշումը, վերջինս պետք է կողմերի համար (inter partes) անվավեր ճանաչի Կառավարության որոշումը, այնուհետև՝ կիրառի համապատասխան օրենքը: Եթե նույն իրավիճակում Կառավարության որոշումը հակասում է միջազգային պայմանագրին, ապա Վարչական դատարանը չի կարող (թեկուզ կողմերի համար) անվավեր ճանաչել Կառավարության որոշումը, այլ պետք է զուտ դատական ակտում արձանագրի, որ կա հակասություն Կառավարության որոշման և միջազգային պայմանագրի միջև և հիմք ընդունելով Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասը՝ կիրառի միջազգային պայմանագիրը:

Վերոգրյալն ամփոփելով կարող ենք պնդել, որ միջազգային պայմանագրերը ՀՀ օրենսդրության մաս չեն կազմում, իսկ օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ու միջազգային պայմանագրերի միջև հակասություն առաջանալու դեպքում վերջինս ունի զուտ կիրառման առաջնայնություն: Սահմանադրի այս մոտեցումը պայմանավորված է նրանով, որ պետությունը պետք է միջազգային հարթությունում կատարի իր իսկ կողմից ստանձնած պարտավորությունները և չդիմի փախուստի՝ վկայակոչելով իր ներպետական իրավունքը: Ասվածը, սակայն, չի նշանակում, որ միջազգային պայմանագիրն ավելի բարձր իրավաբանական ուժ ունի, քան ներպետական օրենսդրական ակտերը: Խոսքը տարբեր իրավակարգերի և դրանց փոխհարաբերությունների մասին է⁶:

Վերոգրյալի համատեքստում կարող ենք արձանագրել, որ Եվրասիական տնտեսական միության պայմանագիրը, որը վավերացվել է ՀՀ կողմից, ունի կիրառման առաջնայնություն ՀՀ օրենքների և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ, բայց վերջիններս չեն կարող անվավեր ճանաչվել առաջինիս հակասելու հիմքով:

գ. Միության տեխնիկական կանոնակարգերը

Միության տեխնիկական կանոնակարգերը, ըստ Պայմանագրի 52-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության, ունեն ուղղակի գործողություն միության տարածքում: Միության կանոնակարգերը ապահովում են Միության տարածքում որոշակի ոլորտների միասնական կանոնակարգվածություն: Դրանց նպատակը այն է, որ Միության անդամ պետությունները տնտեսական հարաբերությունների շրջանակում ունենան միանման կարգավորումներ, և որևէ անդամ պետություն հնարավորություն չունենա, վկայակոչելով իր ներպետական օրենսդրությունը, արգելի օրինակ՝ ինչ-որ մի տեսակի ապրանքի, որը Միության շրջանակում հանդիսանում է շրջանառության առարկա, ներմուծումն իր պետության տարածք:

Թեև տեխնիկական կանոնակարգերի ինստիտուտը վերոշարադրյալում ներկայացված իմաստով լիովին ընդունելի է, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ դրանք կարող են պարու-

⁵ «Կիրառման և գործողության առաջնայնություն» հասկացությունների վերաբերյալ մանրամասն տե՛ս *Ղամբարյան Ա., Մուրադյան Մ., Շաքարյան Թ.*, «Միջազգային պայմանագրին հակասելու հիմքով եթաօրենսդրական ակտերն անվավեր ճանաչելը (մեթոդաբանական և վարչադատավարական հիմնախնդիրները)», Օրենքի պատվար գիտամեթոդական ամսագիր թիվ 19, 2025 թ. հունիս, էջ 61 և հաջորդներ, մասնավորապես՝ էջ 85 և հաջորդներ:

⁶ Միջազգային պայմանագրի և ներպետական իրավունքի հարաբերակցության մասին մանրամասն տե՛ս *Ղամբարյան Ա., Մուրադյան Մ., Շաքարյան Թ.* նույն տեղում, որտեղ մանրամասն անդրադարձ է կատարվում նաև ասվածին ճիշտ հակառակ դիրքորոշում պարունակող ՀՀ Վճռաբեկ դատարանի ՎԴ/9227/05/23 վարչական գործով 25.09.2024 թվականին կայացված որոշմանը:

նակել նաև այնպիսի դրույթներ, որոնք սահմանափակում են Միության անդամ պետությունների բնակչության հիմնական իրավունքները և ազատությունները⁷, անհրաժեշտ է վերլուծել, թե ինչ պետք է հասկանալ «ուղղակի գործողություն» եզրույթի ներքո: Արդյո՞ք դա նշանակում է, որ Միության կանոնակարգերը՝ որպես ինքնատիպ իրավական ակտեր (*sui generis*), ներպետական օրենսդրություն ինկորպորացվելու կարիք չունեն և կարող են ուղղակիորեն կաշկանդել ոչ միայն Միության անդամ պետությանը, այլև Միության անդամ պետությունների քաղաքացիներին:

Վերոնշյալի համատեքստում արդարացված կլինի հակիրճ անդրադարձ կատարել ԵՄ իրավունքի շրջանակում ընդունվող իրավական ակտերին՝ ուղենիշներին և կարգադրություններին ու իրավահամեմատական անցկացնել Միության կանոնակարգերի հետ:

ԵՄ իրավունքի աղբյուրների շրջանակում տարբերակվում են առաջնային և երկրորդական իրավունքը: Առաջնային իրավունքի մեջ են մտնում ԵՄ հիմնադիր պայմանագրերը և դրանց արձանագրությունները, ԵՄ համընդհանուր իրավական սկզբունքները և Հիմնական իրավունքների խարտիան⁸: Երկրորդային իրավունքի մեջ են մտնում ուղենիշներն ու կարգադրությունները⁹: Թե՛ ուղենիշները, թե՛ կարգադրություններն ընդունվում են ԵՄ Խորհրդի և Պառլամենտի կողմից՝ Հանձնաժողովի առաջարկությամբ՝ հատուկ օրենսդրական ընթացակարգերի շրջանակներում:

ԵՄ ուղենիշները պարտավորեցնում են ԵՄ անդամ պետություններին ներպետական օրենսդրության համապատասխանեցման միջոցով ներդաշնակեցնելու իրենց իրավունքը ԵՄ ուղենիշներով սահմանված դրույթներին: Ընդ որում, ԵՄ անդամ պետություններին թողնվում է որոշակի «խաղաղաշտ»: Այսինքն՝ նրանք կարող են իրենց հայեցողությամբ, օրինակ՝ սահմանել ավելի խիստ պահանջներ, քան որ կարգավորված են ուղենիշներով: Ըստ այդմ, եթե դիտարկում ենք ԵՄ ուղենիշը և Միության կանոնակարգը, ապա միանշանակ կարելի է պնդել, որ դրանք համեմատելի չեն, քանի որ, ի տարբերություն ԵՄ ուղենիշի, Միության կանոնակարգը, ըստ Պայմանագրի, նախ և առաջ, գործում է ուղղակիորեն, այսինքն՝ ներդաշնակեցման կարիք չունի, ինչպես նաև ոչ թե սահմանում են որոշակի մինիմալ ստանդարտներ, որոնցից կարելի է այս կամ այն կերպ շեղվել, այլ հստակ դրույթներ, որոնք պետք է անշեղորեն կատարվեն Միության անդամ պետությունների կողմից:

Միության կանոնակարգին ավելի մոտ են կանգնած ԵՄ կարգադրությունները, որոնք, ինչպես Միության կանոնակարգերը, գործում են ուղղակիորեն, այսինքն՝ չունեն ներպետական իրավակարգերում ինկորպորացվելու կարիք:

Մինչ Միության կանոնակարգերի և ԵՄ կարգադրությունների ընդհանրություններին և տարբերություններին անդրադառնալը, գտնում ենք, որ տեղին կլինի քննարկման առարկա դարձնել մի կողմից Միության միջազգային-իրավական կարգավիճակը, ինչպես նաև ԵՄ իրավական կարգավիճակը (իրավական բնույթը), քանի որ միայն դրանից հետո է հնարավոր պատասխանել այն հարցին, թե արդյոք այս երկու կառույցներն իրար այնքան մոտ են, որ արդարացված կլինի Միության կանոնակարգերի և ԵՄ կարգադրությունների միջև հավասարության նշան դնելը:

⁷ Նշվածով պայմանավորված *S. Մարկոսյանը* և *Ա. Սանթրոսյանը*, իդում անելով *Чуркин В.Е.*, *Наднациональное право: основные особенности* // Журнал российского права, 2017, с. 135-137, պնդում են, որ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ակտերին հաղորդում է *վերագրային իրավունքի* աղբյուրին բնորոշ հատկանիշներ, տե՛ս Գիտական Արցախ 2021, № 1 (8), էջ 86 և հաջորդներ, մասնավորապես՝ էջ 89:

⁸ Տե՛ս *Herdegen*, *Europarecht*, 22. Auflage 2020, § 8 Rn. 4:

⁹ Տե՛ս *Herdegen*, նույն աշխատությունը, § 8 Rn. 48:

աա. Էքսկուրս. Եվրոպական միության և Եվրասիական տնտեսական միության միջազգային-իրավական կարգավիճակը

Եվրոպական Միությունը, որի նորագույն պատմությունը սկսվել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո¹⁰, ինքնատիպ է, քանի որ այն ներկայում չի կարող համարվել զուտ միջազգային պայմանագրային իրավունքի հիման վրա ստեղծված միջազգային կազմակերպություն: Միջազգային կազմակերպությունները, ինչպիսիք են օրինակ՝ ՄԱԿ-ը, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը և ՆԱՏՕ-ն, ստեղծվում են միջազգային պայմանագրերի հիման վրա, և դրանց ընդունած ակտերը պարտադիր ենթակա են ներպետական մակարդակում *ինկորպորացման*: Դրանք չունեն ուղղակի ներգործություն և կաշկանդում են բացառապես պետություններին, բայց ոչ՝ մասնավոր անձանց: Ի տարբերություն նշված միջազգային կազմակերպություններին՝ ԵՄ-ն ուրույն տեղ է զբաղեցնում միջազգային կառույցների շրջանակում, քանի որ այն կարող է ընդունել ոչ միայն ուղենիշներ, այլև՝ կարգադրություններ, որոնք ուղղակիորեն գործում են անդամ պետություններում և *կաշկանդում նաև մասնավոր անձանց*:¹¹

Վերոնշյալի համատեքստում կարող ենք անդել, որ ԵՄ-ին ավելի բնութագրական է «պետությունների միասնություն» եզրույթը: Ընդ որում, ըստ ԳԴՀ Սահմանադրական դատարանի¹², «միասնություն» տերմինը «*բնութագրվում է որպես ինքնիշխանությունը պահպանող պետությունների միջև երկարաժամկետ համագործակցություն, որը հիմնված է պայմանագրի վրա և որի շրջանակում իրականացվում է հանրային իշխանություն: Այդ համագործակցության հիմքում ընկած իրավակարգը ենթակա է միայն անդամ պետությունների փոփոխությանը, և այդ միասնության ժողովրդավարական լեգիտիմության սուբյեկտներ մնում են ժողովուրդները, այսինքն՝ անդամ պետությունների քաղաքացիություն ունեցող քաղաքացիները*»: Ընդ որում, ԵՄ-ն՝ որպես սուբյեկտ, իր լեգիտիմությունը ստանում է մի կողմից անդամ պետությունների խորհրդարանների կողմից, մյուս կողմից՝ հենց անդամ պետությունների ժողովուրդների կողմից ընտրվող ԵՄ-Պառլամենտի միջոցով¹³: Այսպիսով, կարելի է արձանագրել, որ ԵՄ-ն իրապես ինքնատիպ է և դեռևս չունի նմանակն ամբողջ աշխարհում:

ԵՄ-ից էապես տարբերվում է Եվրասիական տնտեսական միությունը: Ինչպես հենց անունից է բխում, այն մի քանի երկրների միջև ստեղծված միություն է՝ հիմնված «Եվրասիական միության մասին» միջազգային պայմանագրի վրա, որը թեև ունի գործադիր մարմիններ (Բարձրագույն խորհուրդ, Միջկառավարական խորհուրդը, Հանձնաժողով), բայց որի լեգիտիմության միակ հիմքը հենց Միության մասին պայմանագիրն է, և, որը թերևս ամենակարևորն է, այն զուտ տնտեսական միություն է՝ ուղղված տնտեսական համագործակցության: Միությունը չունի որևէ մարմին, որի ձևավորմանը, ինչպես դա ԵՄ Պառլամենտի պարագայում է, մասնակցում է Միության անդամ պետության ժողովուրդը: Լեգիտիմությունն այդ մարմիններին այս կամ այն ձևով հաղորդվում է միջնորդավորված կերպով՝ անդամ պետությունների պաշտոնյաների, որոնք իրենց հերթին ունեն ներպետական որոշակի լեգիտիմություն,

¹⁰ Միջնադարում Եվրոպական Միության գաղափարների վերաբերյալ տես Hakenberg, *Europarecht*, 10. հրատարակչություն 2024, կետ. 3 և հաջորդներ

¹¹ ԵՄ-ի իրավական բնույթի և միջազգային կազմակերպություն լինելու վերաբերյալ ավելի մանրամասն տես Bruno de Witte, “EU Law: Is it International Law?” in: Catherine Barnard & Steve Peers, *European Law*, 3rd Edition 2020, էջ 191 ու հաջորդներ: Witte-ն, միանալով Wyatt and Dashwood-ին (*European Union Law* (5th edn, London: Sweet & Maxwell, 2006) 132)), անդում է, որ ԵՄ-ն միջազգային կազմակերպության զարգացված տեսակ է (հեղ. ինքնատիպ), ով ունի սաղմնավորման փուլում գտնվող դաշնության հատկանիշներ:

¹² ԳԴՀ ՍԴ որոշումների ժողովածու, հատոր 123, էջ 267, մասնավորապես՝ էջ 348– Lissabon.

¹³ Տես Hartsch/Koenig/Pechstein, *Europarecht*, 12. հրատարակչություն 2020, կետ 137:

Միության մարմիններ գործուղմամբ:

Ուստի նման պարագայում հարց է առաջանում, թե որքանով է սահմանադրաիրավական տեսանկյունից արդարացված, երբ Միությունն ընդունում է իրավական ակտեր, որոնք կարող են սահմանափակել անդամ պետությունների քաղաքացիների սահմանադրաիրավական իրավունքները, բայց չունենան համապատասխան լեգիտիմություն: Այս հարցը, սակայն, սույն հոդվածի շրջանակներից դուրս է և պետք է դիտարկվի ավելի շատ ժողովրդավարության սկզբունքի լույսի ներքո:

Սույն վերլուծության շրջանակում ավելի կարևոր է այն հարցը, թե, այնուամենայնիվ, անկախ Միության տեխնիկական կանոնակարգերի «լեգիտիմությունից» որքանով է հնարավոր դատաիրավական առումով պաշտպանվել միության կանոնակարգերից: Այդ իսկ պատճառով այս կարճ էքսկուրսից հետո ստորև անդրադարձ կկատարվի այն հացրադրմանը, թե արդյոք և ինչ եղանակով է հնարավոր դատական պաշտպանություն հայցել Միության կանոնակարգերի նկատմամբ: Բայց մինչև այդ՝ հաշվի առնելով սույն հոդվածի իրավահամեմատական բնույթը, գտնում ենք, որ արդարացված կլինի նախև առաջ կրկին անդրադարձ կատարել ԵՄ իրավունքին, որին կհաջորդի Միության իրավունքի վերաբերյալ դիտարկումները:

բբ. ԵՄ ուղենիշների և կարգարդությունների դատական վերահսկողությունը

Թե՛ ԵՄ ուղենիշները, թե՛ կարգարդությունները, ենթակա են ԵՄ դատարան(ների)ի կողմից վերահսկողության: Այսինքն՝ եթե որևէ ուղենիշ կամ կարգարդություն հակասում է ԵՄ պայմանագրերին կամ (հատկապես) Հիմնական իրավունքների խարտիային, ապա ԵՄ դատարանը¹⁴ կարող է դրանք դատական վերահսկողության շրջանակներում (տես «Եվրոպական Միության Աշխատակարգի վերաբերյալ» ԵՄ պայմանագրի 263-րդ հոդվածը) առ ոչինչ ճանաչել: Ընդ որում որպես դիմող սուբյեկտներ կարող են հանդես գալ թե՛ անդամ պետությունները, թե՛ ֆիզիկական և իրավաբանական անձինք: Վերջինի դեպքում, սկզբունքորեն, վիճարկման առարկա կարող է լինել միայն ԵՄ կարգարդությունը, բայց ոչ՝ ուղենիշը (տես «Եվրոպական Միության Աշխատակարգի վերաբերյալ» ԵՄ պայմանագրի 263-րդ հոդվածի 4-րդ պարբերությունը): Դա պայմանավորված է նրանով, որ ուղենիշները չունեն ուղղակի գործողություն և պետք է ինկորպորացվեն ներպետական մակարդակ: Իսկ այդ դեպքում դրա դեմ պետք է պայքարել ոչ թե վիճարկելով հենց ուղենիշը, այլ, նախ և առաջ, ուղենիշը ներպետական մակարդակում ինկորպորացնող իրավական ակտը: Իսկ կարգարդությունները, որոնք ունեն ուղղակի գործողություն և կաշկանդում են նաև ԵՄ տարածքում բնակվող անձանց, կարող են դառնալ ԵՄ դատարանների քննության առարկա: Ընդ որում, ԵՄ դատարանների համար չափացույց են հանդիսանում ԵՄ պայմանագրերը, այսինքն՝ Եվրոպական միության մասին պայմանագիրը, Եվրոպական միության աշխատակարգի մասին պայմանագիրը և Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիան: Այսինքն՝ ԵՄ-ն առնվազն 2009 թվականի այսպես կոչված՝ «Լիսաբոնի պայմանագրից» սկսած ապահովել է անդամ պետությունների քաղաքացիների համար հնարավորություն՝ պայքարելու ԵՄ այն իրավական ակտերի դեմ, որոնք ուղղակիորեն առնչվում են իրենց իրավունքների և ազատություններին:

Ընդ որում, հատկանշական է, որ բազում անգամ պետություններին¹⁵ (հատկապես) սահ-

¹⁴ Եվրոպական միությունում գոյություն ունի երկու դատարան, որոնք միմյանց հետ գտնվում են հիերարխիկ աստիճանակարգության մեջ, ինչպես օրինակ ՀՀ-ում՝ Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանը: Դրանք են՝ ԵՄ առաջին ատյանի դատարանը և ԵՄ դատարանը:

¹⁵ Օրինակ՝ Չեխիա, տես՝ https://ukconstitutionallaw.org/2012/02/22/jan-komarek-playing-with-matches-the-czech-constitutional-courts-ultra-vires-revolution/?utm_source=chatgpt.com

մանադրական դատարաններն իրենց իրավունք են վերապահել ստուգելու նաև ԵՄ իրավական ակտերի սահմանադրականությունը՝ ներպետական սահմանադրությունների լույսի ներքո¹⁶: Թեև այս իրավունքից անդամ պետության դատարանները չափազանց սահմանափակ կերպով են օգտվում (հաշվի առնելով նաև դրա իրավաքաղաքական հետևանքները), բայց և այնպես, սահմանադրաիրավական դոգմատիկայի տեսանկյունից, զուտ դրա հնարավորության առկայությունն արդեն իսկ ապահովում է ծայրահեղ դեպքում անդամ պետության քաղաքացիների արդյունավետ դատական պաշտպանության հնարավորությունը:

Վերը շարադրվածի լույսի ներքո կարելի է միանշանակ պնդել, որ ԵՄ իրավունքը բավարար չափով սահմանել է երաշխիքներ, որոնց միջոցով հնարավոր է պայքարել ԵՄ կողմից ընդունված օրենսդրական և գործադիր իշխանության ակտերի դեմ:

զգ. Միության կանոնակարգերի նկատմամբ դատական վերահսկողությունը

Վերոնշյալի համատեքստում սույն վերլուծության շրջանակներում պետք է պատասխանել այն հարցին, թե արդյոք Միության կանոնակարգերի նկատմամբ գոյություն ունի դատական պաշտպանության հնարավորություն: Հարցադրումը չափազանց վերացական չափակելու համար, կարծում ենք, արդարացված կլինի այն կոնկրետացնել և ներկայացնել մեկ օրինակ վրա, որը վերջին ժամանակահատվածում, հատկապես Հայաստանի Հանրապետությունում, առաջացրել է պրակտիկ բազում խնդիրներ: Բայց մինչ կոնկրետ օրինակին անդրադառնալն անհրաժեշտ է Պայմանագրի դրույթների լույսի ներքո նախ և առաջ դիտարկել այն հարցը, թե արդյոք, առհասարակ, Միության պայմանագիրը հնարավորություն է ընձեռում այս կամ այն կերպ վիճարկել տեխնիկական կանոնակարգերը:

Բարձրացված հարցին պատասխանում է Պայմանագրի 2-րդ հավելվածը, որն իր մեջ պարունակում է Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտը (այսուհետ նաև՝ Ստատուտ), որի 4-րդ գլուխը նվիրված է Միության դատարանի իրավասություններին: Ըստ Ստատուտի 39-րդ կետի՝

«39. Դատարանը քննում է այն վեճերը, որոնք ծագում են Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի և (կամ) Միության մարմինների որոշումների կիրարկման հարցերի շուրջ.

1) անդամ պետության դիմումի համաձայն՝

Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագիրը կամ դրա առանձին դրույթները Պայմանագրին համապատասխանելու մասին,

այլ անդամ պետության (այլ անդամ պետությունների) կողմից Պայմանագիրը, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը և (կամ) Միության մարմինների որոշումները, ինչպես նաև նշված միջազգային պայմանագրերի և (կամ) որոշումների առանձին դրույթները պահպանելու մասին,

Հանձնաժողովի որոշումների կամ դրա առանձին դրույթները Պայմանագրին, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին և (կամ) Միության մարմինների որոշումներին համապատասխանելու մասին,

Հանձնաժողովի գործողությունը (անգործությունը) վիճարկելու մասին.

2) տնտեսավարող սուբյեկտի դիմումի համաձայն՝

¹⁶ Տե՛ս օրինակ Գերմանիայի համար ԳԴՀ ՍԴ որոշումների ժողովածու, հատոր 123, էջ 267 ու հաջորդներ „Lissabon“ (2009); այս որոշման վերաբերյալ դիտարկումներ տես Michels, “Die dreidimensionale Reservekompetenz des BVerfG im Europarecht – Von der Solange-Rechtsprechung zum Honeywell-Beschluss” JA 2012, էջ 515 ու հաջորդներ:

ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեության ոլորտում անմիջականորեն տնտեսավարող սուբյեկտի իրավունքներին և օրինական շահերին առնչվող Հանձնաժողովի որոշումը կամ դրա առանձին դրույթները Պայմանագրին և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին համապատասխանելու մասին, եթե այդպիսի որոշումը կամ դրա առանձին դրույթները հանգեցրել են Պայմանագրով և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով տնտեսավարող սուբյեկտի համար նախատեսված իրավունքների և օրինական շահերի խախտմանը,

Հանձնաժողովի՝ ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեության ոլորտում անմիջականորեն տնտեսավարող սուբյեկտի իրավունքներին և օրինական շահերին առնչվող գործողությունը (անգործությունը) վիճարկելու մասին, եթե այդպիսի գործողությունը (անգործությունը) հանգեցրել է Պայմանագրով և (կամ) Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով տնտեսավարող սուբյեկտի համար նախատեսված իրավունքների և օրինական շահերի խախտմանը:

Սույն Կանոնադրության նպատակների համար տնտեսավարող սուբյեկտ ասելով՝ ենթադրվում է իրավաբանական անձ, որը գրանցված է անդամ պետության կամ երրորդ պետության օրենսդրության համաձայն, կամ ֆիզիկական անձ, որը գրանցված է որպես անհատ ձեռնարկատեր՝ անդամ պետության կամ երրորդ պետության օրենսդրության համաձայն:»

Վերը նշված դրույթների զուտ բառացի շարադրանքը հստակ ցույց է տալիս, որ Միության դատարան կարող են դիմել մի կողմից Միության անդամ պետությունները, մյուս կողմից նաև իրավաբանական և ֆիզիկական անձինք, բայց միայն այնպիսիք, որոնք հանդիսանում են տնտեսավարող սուբյեկտ: Դրանից հետևում է, որ ոչ տնտեսավարող սուբյեկտներ համարվող իրավաբանական և ֆիզիկական անձինք չեն կարող դիմել Միության դատարան, եթե գտնում են, որ, օրինակ, այս կամ այն տեխնիկական կանոնակարգի դրույթների պատճառով սահմանափակվել է իր որևէ հիմնական իրավունք և/կամ ազատություն:

Ասվածը արդեն կարելի է հստակեցնել մեկ պրակտիկ օրինակի հիման վրա.

Մաքսային միության հանձնաժողովի կողմից 09.12.2011 թվականի թիվ 877 որոշմամբ (այսուհետ նաև՝ Հանձնաժողովի որոշում) հաստատված՝ թիվ ՄՄ ՏԿ 018/2011 «Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգի» 8-րդ հավելվածի «Տեսանելիության ապահովմանը ներկայացվող պահանջները» բաժնի 4.3-րդ կետի համաձայն՝ *հողմապակու և ապակիների լուսանցիկությունը, որոնց միջով ապահովվում է վարորդի համար տեսանելիությունը, պետք է կազմի առնվազն 70%: Զրահապատ պաշտպանական միջոցով համալրված տրանսպորտային միջոցների համար այդ ցուցանիշը պետք է կազմի առնվազն 60%:* Եթե այս դրույթը դիտարկում ենք Պայմանագրով՝ տեխնիկական կանոնակարգերի համար սահմանված նպատակների լույսի ներքո, ապա այն կարող է հետապանել բացառապես մարդու կյանքի, առողջության և/կամ գույքի պաշտպանության նպատակ (տե՛ս Պայմանագրի 52-րդ հոդվածի 1-ին մաս): Այսինքն՝ վերոգրյալ տեխնիկական կանոնակարգը, ըստ էության և առաջին հերթին, վերաբերում է ոչ թե տնտեսավարող սուբյեկտների, այլ «սովորական» ֆիզիկական անձանց: Ուստի հարց է առաջանում, թե դատական պաշտպանության տեսանկյունից ինչ հնարավորություններ են ընձեռված այդ տեխնիկական կանոնակարգի կարգավորումներից դիպված անձանց:

(1) Դատական պաշտպանությունը Պայմանագրի շրջանակներում

Տեխնիկական կանոնակարգերից պաշտպանվելու հնարավորություն տրվել է բացառա-

պես Միության անդամ պետությունների տնտեսվարող սուբյեկտներին (տե՛ս Ստատուտի 39-րդ կետի 2-րդ կետը): Ուստի «սովորական» ֆիզիկական անձը, ով ունի մարդատար ավտոմեքենա և որի նկատմամբ տարածվում է Հանձնաժողովի որոշմամբ սահմանված կանոնները, այն է՝ *ապակիների լուսանցիկություն, որոնց միջով ապահովվում է վարորդի համար 70 տոկոս տեսանելիություն*, չի կարող դիմել Միության դատարան, քանի որ առաջինս չի հանդիսանում տնտեսվարող սուբյեկտ:

Ուստի կարելի է արձանագրել, որ հատկապես այն տեխնիկական կանոնակարգերը, որոնք նպատակ չունեն կարգավորելու տնտեսական ոլորտին վերաբերող հարցեր, այլ վերաբերում են մարդու կյանքին, առողջությանը, գույքին և այլնին, մեծամասամբ չեն կարող վիճարկվել Միության դատարանում: Ասվածը եթե դիտարկում ենք ԵՄ իրավունքի շրջանակներում ընձեռված դատական պաշտպանության հնարավորությունների լույսի ներքո, ապա միանգամայն կարելի է արձանագրել, որ ԵՄ իրավակարգում անդամ պետությունների բնակչության դատական պաշտպանության հնարավորություններն անհամեմատ բարձր են, քան Միության անդամ պետության բնակչության հնարավորությունները:

(2) Դատական պաշտպանության հնարավորությունը Հայաստանում

Վերջապես մնում է պատասխանել այն հարցին, թե արդյոք հնարավոր է ներպետական մակարդակում դատական պաշտպանություն փնտրել և գտնել Միության տեխնիկական կանոնակարգերի դեմ:

Կրկին կարելի է հարցադրմանը մոտենալ պրակտիկ օրինակ վրա, որը վերջին ժամանակներում բավականին արդիական է:

Պատկերացնենք ՀՀ քաղաքացի Ա.-ն, ով մասնագիտությամբ իրավաբան է և աշխատում է Կ. Փաստաբանական ընկերությունում՝ աշխատանքային պայմանագրի հիման վրա վարում է մարդատար մի մեքենա, որի կողապակիները թաղանթապատված են այնպես, որ դրանց լուսանցիկությունն ընդամենը 60 տոկոս է: Ա.-ին Պարեկային ծառայությունը տուգանում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ ՎԻՎՕ) 123-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքով, այն է՝ *Ապակիների լուսաթափանցելիության՝ **օրենսդրությամբ** սահմանված չափի խախտմամբ կամ առջևի հողմապակին թաղանթապատված վիճակում կամ կարգի խախտմամբ վարագուրապատված տրանսպորտային միջոցները վարելու համար*: Տուգանք նշանակելու վերաբերյալ որոշման մեջ Պարեկային ծառայությունը հղում է կատարում Հանձնաժողովի որոշմանը:

Ա.-ն որոշում է բողոքարկել վարչական ակտը: Վերադաս վարչական մարմնի կողմից վարչական ակտն անփոփոխ թողնելուց հետո Ա.-ն դիմում է Վարչական դատարան: Ներկայիս դատական պրակտիկան¹⁷ ընթացել է այն ուղղությամբ, որ Միության տեխնիկական կանոնակարգերը, Պայմանագրի 52-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերության հիմքով, դիտարկվում են որպես ՀՀ օրենսդրության մաս և այդ հիմքով կիրառման ենթակա դարձնում նաև ՎԻՎՕ 123-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթը: Տեխնիկական կանոնակարգի՝ օրենսդրության մաս կազմելու իրավական հիմնավորումները ստորին աստիճանի դատարանները հիմնավորում են ՀՀ Վճռաբեկ դատարանի ՎԴ/9227/05/23 վարչական գործով 25.09.2024 թվականին կայացված որոշմամբ արտահայտված դիրքորոշմամբ առ այն, որ «(...)վավերացման միջոցով միջազգային պայմանագիրն ընդգրկվում է ներպետական օրենսդրություն և դառնում դրա մի մասնիկը՝ օժտվելով պարտադիր կիրառելիության հատկանիշով: Ընդ որում,

¹⁷ Տե՛ս օրինակ՝ ՎԴ/10342/05/24; ՎԴ/10918/05/24; ՎԴ/10383/05/25 վարչական գործերով կայացված վճիռները:

միջազգային պայմանագիրն այդպիսով ոչ միայն դառնում է իրավական համակարգի մի մասը, այլև ընդգրկվում է ներպետական օրենսդրությունում և հավասարեցվում ազգային օրենքներին, ըստ այդմ՝ ներպետական օրենսդրության աստիճանակարգությունում, հաջորդելով ՀՀ Սահմանադրությանը, զբաղեցնում է իր ուրույն տեղը: (...)»:

Գտնում ենք, որ թե՛ Վճռաբեկ դատարանի, թե՛ այն հիմք ընդունող դատարանները թույլ են տվել և տալիս կոպտագույն սխալ: Վճռաբեկ դատարանի վերոնշյալ որոշման մասով այստեղ կսահմանափակվենք միայն այն փաստի արձանագրմամբ, որ միջազգային պայմանագրերը որևէ կերպ չեն դառնում ՀՀ օրենսդրության մաս, այլ զուտ ունեն կիրառման առաջնայնություն ՀՀ օրենքների նկատմամբ (ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մաս): Եթե դրանք լինեին ՀՀ օրենսդրության մաս, ապա անհրաժեշտաբար պետք է իրենց ուրույն տեղը զբաղեցնեին նաև Սահմանադրության 5-րդ հոդվածով սահմանված նորմերի **աստիճանակարգությունում**: Բայց, ինչպես հստակ բխում է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասից, միջազգային պայմանագրերի նորմերը զուտ ունեն *կիրառման* առաջնայնություն, իսկ նորմերի աստիճանակարգության տեսանկյունից դրանք չեն հարաբերակցվում ներպետական նորմատիվ իրավական ակտերի հետ¹⁸: Դրանից հետևում է, որ, ի հակառակ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշման, միջազգային պայմանագրերը որևէ պարագայում չեն կարող չափացույց դառնալ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը ստուգելու համար, քանի որ դրանք չունեն ավելի բարձր իրավաբանական ուժ:

Ինչ վերաբերում է սույն վերլուծության համար ավելի առանցքային նշանակություն ունեցող վարչական դատարանների պրակտիկային, ապա վերջիններս, ցավալիորեն, հիմք ընդունելով ՀՀ Վճռաբեկ դատարանի վերոնշյալ ոչ համոզիչ որոշումը, ևս մեկ սխալ քայլ առաջ են գնացել՝ ըստ էության պնդելով, որ Միության տեխնիկական կանոնակարգերը ևս **միջազգային պայմանագրեր են, որոնք ունեն կիրառման առաջնայնություն ՀՀ օրենքների նկատմամբ**: Վարչական դատարանները փաստացի չեն տարբերակում վերաբերական կազմակերպության ընդունված ակտերը և ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերը, ինչը սահմանադրաիրավական տեսանկյունից աններելի սխալ է և խարխուլում է ՀՀ իրավակարգի հիմքերը: Փաստացի վարչական դատարանները, հիմք ընդունելով Պայմանագրի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությունը, եզրահանգում են, որ Միության ցանկացած տեխնիկական կանոնակարգ, ուղղակի գործողություն ունենալու ուժով, պարտադիր է իրավակիրառի համար և կարող է սահմանել իրավունքներ և պարտականություններ ՀՀ քաղաքացիների համար: Այս մեկնաբանությունը, սակայն, համահունչ չէ ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքնության հիմնական իրավունքների հետ: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ Միության տեխնիկական կանոնակարգերը չեն կարող բողոքարկվել ՀՀ իրավակարգում: Եթե անձը ցանկանա Միության տեխնիկական կանոնակարգի որևէ դրույթ վիճարկել, ապա չկա ներպետական որևէ դատական ատյան, որն իրավասու է ստուգելու այդ դրույթի իրավաչափությունը: Վարչական դատարանները ոչ ինցիդենտ, ոչ Վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված նորմի վերահսկողության վարույթի շրջանակում, չեն կարող քննության առարկա դարձնել Միության տեխնիկական կանոնակարգի դրույթը՝ օրեն-

¹⁸ ՀՀ Վճռաբեկ դատարանի համապատասխան որոշման ճշգրիտ և խորը քննադատություն տես *Ղամբարյան Ա., Մուրադյան Մ., Շաքարյան Թ.*, «Միջազգային պայմանագրին հակասելու հիմքով ենթաօրենսդրական ակտերն անվավեր ճանաչելը (մեթոդաբանական և վարչադատավարական հիմնախնդիրները)», Օրենքի պատվար գիտամեթոդական ամսագիր թիվ 19, 2025թ. հունիս, էջ 61 և հաջորդներ:

քով համապատասխան իրավասություն չունենալու պատճառով:

ՀՀ Սահմանադրական դատարանը ևս համապատասխան իրավասությամբ օժտված չէ (տե՛ս ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածը): Կրկին անհրաժեշտ ենք համարում հստակ արձանագրել, որ Միության տեխնիկական կանոնակարգերը **միջազգային պայմանագրեր չեն**: Միջազգային պայմանագիր է միայն «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիրը, բայց ոչ դրա հիման վրա ստեղծված ինչ-որ միջազգային կազմակերպության ընդունած ակտերը:

Այս առումով հատկանշական և միաժամանակ տարակուսանք առաջացնող է այն հանգամանքը, որ ո՛չ ՀՀ Վճռաբեկ դատարանը, ո՛չ վերջինիս դատական սխալ պրակտիկան մեկ քայլով ավելի սխալ դարձնող Վարչական դատարանները հարկ չեն համարել անդրադարձ կատարել ՀՀ Սահմանադրական դատարանի 2014 թվականի նոյեմբերի 14-ի «2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՍԴՈ-1175 որոշմանը (այսուհետ նաև՝ ՍԴՈ-1175 որոշում), որտեղ Բարձր դատարանը անդրադարձ էր կատարել նաև միջազգային վերապետական մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի՝ Հայաստանի Հանրապետությունում իրավական առումով գործելու հարցին: Մասնավորապես, ՍԴՈ-1175 որոշման 7-րդ կետի վերջին պարբերությունում Բարձր դատարանը, ի ապահովումն ինքնիշխանության, ժողովրդավարության և իրավական պետության սկզբունքների, արձանագրել է հետևյալը.

«ՀՀ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ որևէ վերապետական մարմնի կողմից ընդունված ցանկացած որոշում, որը չի համապատասխանում այդ պահանջներին, կիրառելի չէ Հայաստանի Հանրապետությունում: Իսկ այդ պահանջների պահպանման պարագայում Հայաստանի Հանրապետության կողմից այս կամ այն տարածաշրջանային կամ միջազգային կազմակերպության հետ գործակցությունը սահմանադրականության խնդիր չի կարող առաջացնել: Սա ամբողջությամբ վերաբերում է նաև քննության առարկա Պայմանագրին ու դրա շրջանակներում ստանձնվող միջազգային պարտավորություններին»¹⁹:

Սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշումից բխում է, որ չի կարող լինել որևէ միջազգային իրավունքի իրավական ակտ, որը կհակասի ՀՀ Սահմանադրությանը, բայց կշարունակի կիրառվել Հայաստանի Հանրապետությունում:

Սահմանադրական դատարանի նշյալ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշմանը կտրուկ դեմ են գնում մասամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը և հատկապես՝ վարչական դատարանները: ՀՀ Վճռաբեկ դատարանը պնդում է, որ միջազգային պայմանագրերը հաջորդում են Սահմանադրությանը և ունեն գործողության առաջնայնություն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ²⁰: Վարչական դատարանները, ըստ էու-

¹⁹ Ընդգծումը՝ հեղինակի:

²⁰ Խնդիրը այն է, որ միջազգային պայմանագրերի մեկնաբանությունը ժամանակի ընթացքում ևս կարող է փոփոխվել այնպես, որ հակասի ՀՀ Սահմանադրությանը: Օրինակ՝ պատկերացնենք՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 12-րդ հոդվածով երաշխավորված ամուսնանալու ազատությունը Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի օր մեկնաբանում է այնպես, որ «կինը և տղամարդը» եզրույթը

թյան, նույնացնում են միջազգային պայմանագրերը և Միության տեխնիկական կանոնակարգերը՝ վերջիններիս դիտարկելով որպես միջազգային պայմանագրեր, որոնք ունեն ուղղակի գործողություն Պայմանագրի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության ուժով: Երկու իրավական դիրքորոշումներն էլ խարխուլում են ՀՀ ինքնիշխանությունը և ենթակա են անհապաղ վերանայման:

Ծայրահեղ օրինակները թեև իրավաբանության մեջ ընդունված չեն, բայց, որպեսզի ցույց տրվի ՀՀ Վճռաբեկ դատարանի և վարչական դատարանների իրավական դիրքորոշումների վտանգավորության աստիճանը, բերենք մի հորինված օրինակ, որով, սակայն, ցույց կտրվի դատարանների մոտեցումների վտանգավորության աստիճանը:

Դիցուք, պատկերացնենք, որ Հանձնաժողովի որոշման հավելվածում ոչ միայն սահմանվում է մեքենայի կողապակիների լուսանցիկության չափը, այլև ի ապահովումն մարդկանց կյանքի և առողջության, սահմանվում է, որ Միության անդամ պետությունների բոլոր այն քաղաքացիները, որոնք կխախտեն սահմանված կանոնը, ենթակա են ազատազրկման՝ հինգից տասը տարի ժամկետով:

Եթե հիմք ենք ընդունում ՀՀ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը և այն էլ ավելի սխալ կերպ զարգացնող Վարչական դատարանների իրավական դիրքորոշումը, ապա բոլոր ՀՀ քաղաքացիները, որոնք վարում են թաղանթապատված կողապակիներով մեքենաներ, որոնց կողապակիների լուսանցիկության աստիճանը կազմում է օրինակ՝ 60 տոկոս, ապա նրանք պետք է դատախազության կողմից ենթարկվեն քրեական հետապնդման և Հանձնաժողովի կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգի հիման վրա դատապարտվեն հինգից տասը տարի ազատազրկման: Չէ՞ որ Պայմանագրի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության ուժով Միության տեխնիկական կանոնակարգերը գործում են ուղղակիորեն: Իսկ եթե ՀՀ քաղաքացին այդ դեպքում փորձի դիմել Վարչական դատարան, վերջինս հայցադիմումի վարույթ ընդունումը կամ կմերժի, կամ կթողնի առանց քննության՝ համապատասխան իրավասություն չունենալու պատճառով: Նույնը վերաբերում է ՀՀ Սահմանադրական դատարանին, քանի որ վերջինս ևս չունի սահմանադրաիրավական իրավասություն՝ ստուգելու Միության տեխնիկական կանոնակարգերի սահմանադրականությունը (Սահմանադրության 168-րդ հոդված):

Արդյունքում ստացվում է, որ գոյություն ունի մի վերաբերական մարմին, որի կողմից ընդունված տեխնիկական կանոնակարգերը, որոնք սահմանափակում են ՀՀ քաղաքացիների հիմնական իրավունքները և ազատությունները (տվյալ դեպքում՝ մեքենայի սեփականատիրոջ՝ գույքն իր հայեցողությամբ օգտագործելու իրավունքը [Սահմանադրության 60-րդ հոդված]), ո՛չ ներպետական, և մեծամասամբ ո՛չ էլ միջազգային մակարդակում, չեն կարող վիճարկվել:

Վերը նկարագրված իրավիճակն ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով երաշխավորված ինքնիշխանության, ժողովրդավարության և իրավական պետության սկզբունքին, ինչպես նաև 61-րդ և 63-րդ հոդվածներով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքին: Ուստի գտնում ենք,

խոչընդոտ չէ, որպեսզի մի քանի կանայք մի քանի տղամարդկանց հետ միաժամանակ ամուսնանան և կազմեն ընտանիք: Ակնհայտ է, որ ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածին նման մեկնաբանությունը կհակասի: Արդյո՞ք եթե գոյություն ունենա Կառավարության մի որոշում, որով կսահմանվի բազմանդամ ամուսնությունների արգելքը, ապա վարչական դատարանները (ըստ՝ Վճռաբեկ դատարանի) պարտավոր կլինեն այդ որոշումը ճանաչելու անվավեր՝ ՄԻԵԿ 12-րդ հոդվածին հակասելու հիմքով:

որ ՀՀ Վճռաբեկ դատարանը և վարչական դատարանները պետք է անհապաղ փոխեն իրենց իրավական դիրքորոշումը Միության տեխնիկական կանոնակարգերի վերաբերյալ՝ վերադառնալով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող դաշտ:

Վերոգրյալի շրջանակում անհրաժեշտ է նաև հակիրճ անդրադարձ կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասին, որի համաձայն՝

«1. Եվրասիական տնտեսական միության Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նորմատիվ իրավական բնույթի ակտերը, «Եվրասիական տնտեսական միության մասին» միջազգային պայմանագրին համապատասխան, Հայաստանի Հանրապետության քարաձքում ենթակա են անմիջական կիրառության:»

Այս դրույթը, ըստ էության, կրկնում է Պայմանագրի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության դրույթը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածն ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքներին (61-րդ և 63-րդ հոդվածներ) և այդպիսով ենթակա է կամ օրենսդրի նախաձեռնությամբ վերացման, կամ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից հակասահմանադրական ճանաչման²¹:

դ. Առաջարկվող լուծումներ

Ներկայացված խնդիրները կարելի է լուծել մի քանի եղանակով: 1-ին տարբերակը ՄԴՈ-1175 որոշման հիման վրա Միության տեխնիկական կանոնակարգերի սահմանադրականության ստուգումն է և հիմնավոր կասկած ունենալու դեպքում Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով վարույթի կասեցումը և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացումը: Այդ դեպքում ՀՀ Սահմանադրական դատարանը, անալոգիա կիրառելով ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի նկատմամբ, դատարանների կողմից ներկայացված դիմումով գործն ընդունում է վարույթ և ստուգում տեխնիկական կանոնակարգի սահմանադրականությունը:

2-րդ տարբերակն այն է, որ Միությունը, ընդօրինակելով Եվրոպական Միությանը, նախ և առաջ սահմանի հիմնական իրավունքների և ազատությունների ժամանակակից ցանկ, որոնց լույսի ներքո Միության դատարանը Միության անդամ պետության ցանկացած բնակչի դիմումի հիման վրա կստուգի Միության տեխնիկական կանոնակարգերի համապատասխանությունը հիմնական իրավունքներին և ազատություններին:

2-րդ տարբերակի պարագայում, սակայն, միևնույն է, ՀՀ Սահմանադրական դատարանին պետք է վերապահվի իրավունք ինքնուրույն ստուգելու և արձանագրելու Միության տեխնիկական կանոնակարգով սահմանված հիմնական իրավունքը և/կամ ազատությունը սահմանափակող դրույթի սահմանադրականությունը (ինչպես դա անում է բացառիկ դեպքերում օրինակ՝ ԳԴՀ Սահմանադրական դատարանը):

3. Եզրակացություն

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի անմիջական կիրառությունը ՀՀ իրավակարգում առաջացնում է բարդ խնդիրներ, որոնց լուծման համար նախ և առաջ պետք է հստակ տարանջատել միջազգային պայմանագրերը և վերաբեռնական

²¹ Հիմնավորումները մնում են նույնը, տե՛ս վերոգրյալը:

կամ միջազգային մարմինների/կազմակերպությունների կողմից ընդունած ակտերը: Ցանկացած միջազգային պայմանագիր, որն առնչվում է ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածով սահմանված բնագավառներին, պարտադիր կերպով պետք է ՀՀ Ազգային ժողովի կողմից օրենքի ընդունման միջոցով վավերացվի, ինչը չի կարելի ասվել Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի մասին՝ վերջիններիս՝ միջազգային պայմանագիր չհանդիսանալու պատճառով:

ՀՀ Վճռաբեկ դատարանի և վարչական դատարանների կողմից միջազգային պայմանագրերի և Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի վերաբերյալ իրավական դիրքորոշումը կոպտորեն խախտում է ՀՀ Սահմանադրությունը և խարխուլում ՀՀ ինքնիշխանության, ժողովրդավարության և իրավական պետության հիմքերը, քանի որ դրա արդյունքում ՀՀ իրավակարգում հայտնվում է մի իրավական ակտ (տեխնիկական կանոնակարգ), որը դուրս է դատական վերահսկողությունից:

Խնդիրը պետք է լուծել կամ ներպետական մակարդակում տեխնիկական կանոնակարգերի սահմանադրականության ստուգմամբ, կամ Եվրասիական տնտեսական միության մակարդակում դատական պաշտպանության արդյունավետության բարձրացմամբ՝ միաժամանակ վերջին խոսքի իրավունքը վերապահելով ՀՀ Սահմանադրական դատարանին:

Ամփոփագիր: Հոդվածում քննարկվում է Հայաստանի Հանրապետությունում ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի կիրառության հիմնախնդիրները, որի շրջանակում անդրադարձ է կատարվում ՀՀ սահմանադրաիրավական նորմատիվ շրջանակին, ձևավորված դատական պրակտիկային, ինչպես նաև իրավահամեմատական է անցկացվում Եվրոպական Միության իրավունքի հետ: Արդյունքում՝ ներկայացվում են խնդրի լուծմանն ուղղված որոշ առաջարկներ: Մասնավորապես, քննարկվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի լույսի ներքո միջազգային պայմանագրերի՝ նորմերի աստիճանակարգում ունեցած տեղը, դրա վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի արդի դատական պրակտիկան, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների/վերպետական կառույցների կողմից ընդունվող իրավական ակտերի անմիջական կիրառության արդյունքում առաջացող իրավական խնդիրները:

Արդյունքում՝ հոդվածում արձանագրվում է, որ Եվրասիական տնտեսական միության պայմանագրի շրջանակներում և ի կատարում դրա պահանջների կարող են ընդունվել այնպիսի իրավական ակտեր (տեխնիկական կանոնակարգեր), որոնք, ըստ էության, դուրս են մնում դատական վերահսկողությունից, ինչն անհամատեղելի է ՀՀ սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների հետ: Ասվածը քննարկվում է վերջին ժամանակներում արդիական դարձած մեքենաների կողպակների լուսաթափանցելիության սահմանված չափերի խախտման փաստով կայացված վարչական ակտերի և դրանց բողոքարկման արդյունքում վարչական դատարանների կողմից ձևավորված դատական պրակտիկայի լույսի ներքո: Հոդվածը եզրափակվում է խնդրի լուծմանն ուղղված հնարավոր մի քանի առաջարկներով:

Annotation. The direct application of the technical regulations of the Eurasian Economic Union (EAEU) in the legal system of the Republic of Armenia (RA) creates complex issues, the resolution of which first requires a clear distinction between international treaties and acts adopted by supranational or international bodies/organizations. Any international treaty related to the areas specified in Article 116 of the RA Constitution must be ratified by the National Assembly of the RA through the adoption of a law, which cannot be said about the technical regulations of the EAEU, as they do not constitute an international treaty.

The legal position of the RA Court of Cassation and administrative courts regarding international treaties and the EAEU technical regulations grossly violates the RA Constitution and undermines the foundations of the RA's

sovereignty, democracy, and the rule of law, as it results in a legal act (technical regulation) within the RA legal system that is beyond judicial oversight.

The issue must be resolved either by verifying the constitutionality of technical regulations at the national level or by enhancing the effectiveness of judicial protection at the EAEU level, while reserving the final say for the RA Constitutional Court.

Аннотация. Прямое применение технических регламентов Евразийского экономического союза (ЕАЭС) в правовой системе Республики Армения (РА) вызывает сложные проблемы, для решения которых в первую очередь необходимо четко разграничивать международные договоры и акты, принятые наднациональными или международными органами/организациями. Любой международный договор, касающийся сфер, указанных в статье 116 Конституции РА, должен быть обязательно ратифицирован Национальным собранием РА путем принятия закона, чего нельзя сказать о технических регламентах ЕАЭС, поскольку они не являются международным договором.

Правовая позиция Кассационного суда РА и административных судов в отношении международных договоров и технических регламентов ЕАЭС грубо нарушает Конституцию РА и подрывает основы суверенитета, демократии и правового государства РА, поскольку в результате, в правовой системе РА появляется правовой акт (технический регламент), который находится вне судебного контроля.

Проблема должна быть решена либо путем проверки конституционности технических регламентов на национальном уровне, либо путем повышения эффективности судебной защиты на уровне ЕАЭС, при этом последнее слово должно сохраняться за Конституционным судом РА.

Բանալի բառեր - Եվրասիական տնտեսական միություն, տեխնիկական կանոնակարգ, կիրառման և գործողության առաջնայնություն, ԵՄ, ուղենիշներ և կարգադրություններ, դատական պաշտպանություն:

Keywords: Eurasian Economic Union, Technical Regulation, Priority of Application and Effect, EU, Directives, Regulations, Judicial Protection.

Ключевые слова: Евразийский экономический союз, Технический регламент, Приоритет применения и действия, ЕС, Директивы, регламенты, Судебная защита.

Օգտագործված գրականության ցանկ

1. Bruno de Witte, „EU Law: Is it International Law?“, in: Catherine Barnard & Steve Peers, European Law, 3rd Edition, 2020, S. 191 ff.
2. Դանիելյան Գ., ԵԱՏՄ-ի մարմինների որոշումների իրավական արժեքը ներպետական իրավական համակարգում // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ԵՊՀ իրատ., 2016, էջ 68 ու հաջորդներ:
3. Hakenberg, Waltraud, Europarecht, 10. Auflage, 2024, Rn. 3 ff.
4. Hartsch, Andreas/Koenig, Christian/Pechstein, Matthais, Europarecht, 12. Auflage, 2020, Rn. 137.
5. Herdegen, Matthias, Europarecht, 22. Auflage, 2020, § 8 Rn. 4 und § 8 Rn. 48.
6. Michels, Tobias „Die dreidimensionale Reservekompetenz des BVerfG im Europarecht – Von der Solange-Rechtsprechung zum Honeywell-Beschluss“, JA 2012, S. 515 ff.
7. Wyatt, Derrick A. and Dashwood, Alan, European Union Law, 5th Edition, London: Sweet & Maxwell, 2006, S. 132.
8. Դամբարյան Ա., Մուրադյան Մ., Շաքարյան Թ., «Միջազգային պայմանագրին հակասելու հիմքով եթաօրենսդրական ակտերն անվավեր ճանաչելը (մեթոդաբանական և վարչադատավարական հիմ-

նախնդիրները)», Օրենքի պատվար գիտամեթոդական ամսագիր, համար. 19, հունիս 2025, էջ. 61 և հաջորդներ:

9. Ղամբարյան Ա., Եվրասիական տնտեսական միության մարմինների և Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի կոլիզիաները, Բանբեր Արդարադատության ակադեմիայի, № 1 (5), 2021, էջ 17 ու հաջորդներ:

10. Մարկոսյան Տ., Սանթրոսյան Ա. Եվրասիական տնտեսական միության մարմինների նորմատիվ իրավական ակտերի կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // Գիտական Արցախ: 2021, № 1 (8), էջ 96:

11. Чиркин В.Е., Наднациональное право: основные особенности // Журнал российского права, 2017, С. 135-137.

Պողոսյան Ա. - Փաստաբան, Ֆրիդրիխ Վիլհելմի անվան Բոննի համալսարանի ասպիրանտ, էլիասցե՝
ashot.poghosyan94@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 21.07.2025 թ., տրվել է գրախոսության 21.07.2025 թ., երաշխավորվել է Ռուս-Հայկական իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան Ա. Ղամբարյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.01.2026 թ.: